ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.09.2017թ

ժամը 10:00

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Ավետիսյան

անդամներ՝ Դ. Աղասինյան, Վ. Պողոսյան

քարտուղար՝ Ն. Նիկոլայան

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Մ. Ավետիսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0**

## 2. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Մ. Ավետիսյան)

Ընդունել ի գիտություն՝

- Հրավերով սահմանված կարգով հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթերն պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, որը ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:
- Մասնակցից չեն պահանջվել հայտը ներկայացվելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում նմանատիպ (ավտոմեքենաների վերանորոգման)մատուցված ծառայունների պայմանագիրը և դրա պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, քանի որ գնման նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը:

***1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց՝***

1. ՀՀ կառավարությանն առընթերն պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը և պարզեց, որ մասնակցի ներկայացրած հայտարարությունը համապատասխանում է իրականությանը՝
    - մասնակիցը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ,
    - հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկից,

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի որակավորումը «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը ներառված չէ՝
   - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
   - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0**

**2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակից ճանաչել «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0**

**3.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին**

(Մ. Ավետիսյան)

Ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիր կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին ք.Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0**

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Ավետիսյան

Անդամներ՝ _____ Դ. Աղասինյան

_____ Վ. Պողոսյան

Քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան